

<https://doi.org/10.56936/18291775-2025.39-69>

ՀՏԴ՝ 61(071.1):378.1:001

«ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆՂԵՍԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տեր-Մարկոսյան Ա.Ս.

ԵՊԲՀ, «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտատեղեկատվական հանդեսի խմբագրություն

Ստացված է՝ 15.03.2025թ., գրախոսված է՝ 09.04.2025թ., ընդունված է՝ 23.04.2025թ.:

Բանալի բառեր՝ կրթություն, նորարարական ծրագրեր, տեղեկատվություն, ուսումնական գործընթացի բարելավում, ինտերակտիվ ուսուցում, ուսանողի ինքնուրույն աշխատանք, ուսանողական գիտական խմբակներ:

Շուրջ 15 տարի «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտատեղեկատվական հանդեսը, բացի տեսական և կլինիկական ուղղվածություն ունեցող գիտահետազոտական հոդվածների հրատարակումից, զբաղված է տարբեր ամբիոններում ուսումնական գործընթացում տեղ գտած նորարարական մոտեցումների լուսաբանմամբ, որը, հասկանալի է, այսօրվա գերհագեցած կյանքի ռիթմում նպաստում է տեղեկատվության տիրապետմանը և փորձի փոխանակման, դրա ձեռքբերման, համագործակցության հիմք ստեղծում: Հանդեսի խմբագրական կազմում ընդգրկված են ուսումնական գործընթացը կազմակերպող և դրան առնչվող, բազմամյա փորձ ունեցող մասնագետներ ոչ միայն մեր համալսարանից և հանրապետությունից, այլև մի շարք արտասահմանյան առաջատար ուսումնական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ: Վերջին տարիներին մեր կողմից իրականացված խմբագրական կազմի թարմացումը, որը համահունչ է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ) պահանջներին, նոր շունչ հաղորդեց մեր պարբերականին, ինչպես նաև հնարավորություն տվեց ավելի ընդլայնելու մեր հեղինակների թեմաների ընդգրկումը: Դրան է նպաստել նաև հանդեսում եռալեզու հոդվածների տպագրության հնարավորությունը: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի այդ բարեփոխումներից հետո թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների արդյունքների

տպագրման ԲԿԳԿ-ի կողմից ընդունվող պարբերականների ցանկում ամրապնդվելը:

Տվյալ հոդվածի նպատակն է վերլուծել վերջին տասնամյակում «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտատեղեկատվական հանդեսում հրատարակված կրթությանը և գիտակրթական ոլորտին վերաբերող հոդվածների բնույթը և դրանց գործնական նշանակությունը: Այս առումով չպետք է մոռանալ նաև կրթական երրորդ աստիճանի ուսուցման մակարդակում գործող շահառուներին՝ ասպիրանտներին, որոնց գործունեությունը կրթության և գիտության հատման սահմանում է: Նրանց կողմից տպագրված գիտական հոդվածների քանակը 10 տարվա ընթացքում տարեկան կազմել է 7-8 հոդված: Սակայն դրանք եղել են բացառապես գիտական բնույթի՝ փորձարարական, կլինիկական հետազոտություններ կամ գրական ակնարկներ, հետևաբար դրանց մանրամասն վերլուծությունը սույն հոդվածում նպատակահարմար չենք գտնում ներկայացնել՝ այնուամենայնիվ ընդգծելով պարբերականի առկայության կարևորությունը ասպիրանտների և հայցորդների գիտական հետազոտությունների արդյունքների տպագրման տեսանկյունից: Սրա հետ մեկտեղ հետաքրքիր էր 2014-2024թթ. ընթացքում հրատարակված կրթական ոլորտի հոդվածների քանակը, բնույթը, ուղղվածությունը համեմատել նախորդ 5 տարիների ընթացքում հրատարակված հոդվածների հետ:

2014-2024թթ. «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում տպագրված հոդվածների ընդհանուր բնութագիրը

Նշված տասնամյա ժամանակաշրջանում պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում հրատարակվել է 29 հոդված, այսինքն՝ միջինը տարեկան 2-3 հոդված: Տպագրված հոդվածների բաշխումն ըստ տարեթվերի մանրամասնորեն ներկայացված է աղյուսակ 1-ում: Այն տարեթվերի հանդեսները, որոնցում չեն ընդգրկվել կամ քիչ են եղել կրթության ոլորտին առնչվող

* ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵ

Ա.Ս. Տեր-Մարկոսյան
ԵՊԲՀ, «Բժշկություն, գիտություն և կրթություն»
գիտատեղեկատվական հանդեսի խմբագրություն
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0025, Կոռյունի 2
Էլ. փոստ՝ annatermarkosyan@gmail.com
Հեռ.՝ (+374) 93 54 10 59

Աղյուսակ 1.

2014-2024թթ. «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում տպագրված հոդվածների քանակը

Բաշխումն ըստ տարեթվերի										
2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
5	4	-	1	2	4	2	3	2	2	4

Աղյուսակ 2.

2014-2024թթ. «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում ԵՊԲՀ տարբեր ստորաբաժանումների կողմից տպագրված հոդվածների քանակը ըստ տարեթվերի

Բաշխումն ըստ ստորաբաժանումների և տարեթվերի												
Վիտա-ֆիզիոլոգիայի ամբիոն	Ֆիզիոլոգիայի ամբիոն	Ախտաբանական և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոն	Հանրային առողջության ամբիոն	Հասարակագիտական առարկաների ամբիոն	Օպերատիվ վիրաբուժության ամբիոն	Սեքսոլոգիայի ամբիոն	Դեղագիտական քիմիայի ամբիոն	Օտար լեզուների ամբիոն	Հայոց լեզվի ամբիոն	Ընտանեկան բժշկության ամբիոն	Տեսական առարկաների ուսումնամեթոդական հանձնաժողով	Կրթական ծրագրերի բաժին
1	3	1	4	3	1	1	1	2	1	2	6	3
2018	2014 2020 2023	2015	2014 2014 2015 2015	2019 2021 2022	2023	2024	2021	2019 2019	2024	2014 2024	2014 2015 2017 2018 2019 2021	2020 2022 2024

հոդվածները, նվիրված են եղել գիտաժողովների նյութերի տպագրությանը: Իսկ գիտաժողովները բավականին շատ են կազմակերպվել և ընդգրկել են գիտահետազոտական բնույթի աշխատանքներ: Դրանք են՝ ԵՊԲՀ 95-ամյակին նվիրված գիտաժողովը (2016, թ. 21), Ստոմատոլոգների առաջին հայ-սլավոնական միջազգային վեհաժողովը, Ստոմատոլոգների հինգերորդ միջազգային վեհաժողովը, (2017, թ. 22), Ստոմատոլոգների առաջին հայ-ամերիկյան միջազգային վեհաժողովը (2018, թ. 25), Միջազգային դեղագործական գիտաժողովը. Դեղերի ստեղծման առաջընթացը նախագծումից մինչև սպառում (2019, թ. 28), Ստոմատոլոգների ասոցիացիայի Հոդվածների ժողովածուն՝ նվիրված Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի 100-ամյա հոբելյանին (2020, թ. 30), «Դեղերի ստեղծման առաջընթացը նախագծումից մինչև սպառում» միջազգային դեղագործական գիտաժողովը՝ նվիրված ԵՊԲՀ դեղագիտական ֆակուլտետի 50 ամյակին (2023, թ. 35):

2020-2022թթ. դիտվող այդ երևույթի երկրորդ պատճառը պայմանավորված էր նաև COVID-19 համավարակով, չնայած խմբագրությունը ողջ հզորությամբ աշխատում էր առցանց:

Ըստ բովանդակության տասնամյա կտրվածքով պարբերականներում տպագրված հոդվածներն անդրադարձել են ուսումնական գործընթացի կազմակերպման կարևորագույն հարցերին՝ համահունչ աշխարհի առաջավոր բուհերի փորձին [35]: Արժարժվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են կրթական ծրագրերի

արդիականացումը և համապատասխանեցումը կրթական համակարգի բարեփոխումներին [17, 46], դասավանդման ընդհանուր մեթոդաբանությունը բուհական և հետբուհական կրթության գործընթացում [2, 3, 9, 10], տեսական առարկաների ուսումնական գործընթացի և ամբիոնի տարեկան հաշվետվության նոր մոտեցումները [4, 11, 27, 28], կլինիկական մտածելակերպի զարգացումը [5, 6, 7, 26, 47, 48, 52], ուսանողների գիտելիքների գնահատման մեթոդաբանությունը [1, 30], ուսանողի ինքնուրույն և հետազոտական աշխատանքի, ինչպես նաև և գիտական խմբակների գործունեության կարևորությունը [16, 29, 43]: Ոչ պակաս կարևոր հարցեր են առաջադրվել լեզվի ամբիոնների կողմից, ինչպիսիք են բժշկական տերմինաբանությունը, օտար լեզուների՝ ուսուցման ինտեգրատիվ և առցանց ուսուցման մեթոդաբանությունը [39, 44, 49]: Ուշագրավ են նաև սեռական դաստիարակության և սեռական առողջության դասավանդման կարևորությանը վերաբերող հոդվածները [37, 38, 51]:

Հետաքրքիր է անդրադառնալ նաև առանձին ամբիոնների և ստորաբաժանումների կողմից ներկայացված հոդվածների քանակին ժամանակագրական առումով (աղյուսակ 2): Ինչպես երևում է աղյուսակից, առավել քանակով հոդվածներ ներկայացված է Տեսական առարկաների ուսումնամեթոդական հանձնաժողովի կողմից: Բավական ակտիվ են եղել նաև հանրային առողջության, ֆիզիոլոգիայի և հասարակագիտական ամբիոնները, ինչպես նաև կրթական ծրագրերի բաժինը: Սակայն, եթե հաշվի առնենք ԵՊԲՀ-

Աղյուսակ 3.

2009-2013 թթ. «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում տպագրված հոդվածների քանակը

Բաշխումն ըստ տարեթվերի				
2009	2010	2011	2012	2013
9	8	7	-	1

Աղյուսակ 4.

2009-2013 թթ ԵՊԲՀ տարբեր ստորաբաժանումների կողմից տպագրված հոդվածների քանակը «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում

ԵՊԲՀ	Ուսման որակի գնահատման և ապահովման կենտրոն, Առողջապահության կազմակերպման և բժշկական իրավունքի ամբիոն	Ինֆորմացիոն և հաղորդակցության տեխնոլոգիաների բաժին	Հետբուհական և շարունակական կրթության	Տեսական առարկաների ուսումնամեթոդական հանձնաժողով	Անեսթեզիոլոգիայի ամբիոն	Ընտանեկան բժշկության ամբիոն	Ախտաբանական ֆիզիոլոգիայի ամբիոն	Օրգանական քիմիայի ամբիոն	Օտար լեզուների ամբիոն
6	1	2	5	1	1	3	1	2	3
2009			2010						
2009			2010			2009			2010
2009	2013	2011	2010	2009	2009	2010	2009	2009	2010
2009		2011	2011			2011		2011	2011
2010			2011						
2010									

ում գործող ամբիոնների և ստորաբաժանումների քանակը, աղյուսակում ներկայացված բոլոր ստորաբաժանումների տվյալներն էլ գույքի են:

Այսպիսով, ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ վերջին տասը տարիների ընթացքում «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականում նշված ոլորտին առնչվող հոդվածների հեղինակները բարձրացրել և քննարկել են ուսումնական գործընթացին վերաբերող բազմաթիվ և բազմաբնույթ կարևոր հարցեր, սակայն նրանց քանակը սակավաթիվ է, այսինքն՝ ոչ բոլոր ամբիոններն են ներկայացնում իրենց ուսումնամեթոդական փորձը, որը բավականին շահավետ կլիներ:

2009-2013թթ. «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում տպագրված հոդվածների ընդհանուր քննադատություն

Սկսած իր կազմավորման ակունքներից (2009թ.)՝ հինգ տարիների ընթացքում պարբերականը բավականին լայնորեն լուսաբանել է ԵՊԲՀ տարբեր ստորաբաժանումների կողմից կատարվող ուսումնամեթոդական գործընթացներին վերաբերող նյութեր, որոնց մասին տվյալները ներկայացված են աղյուսակներ 3-ում և 4-ում: Տպագրվել է 25 հոդված, սակայն պետք է նշել, որ հրապարակվել են նաև նշված ժամանակահատվածում կազմակերպված «Հետդիպլոմային և շարունակական մասնագիտական կրթության արդի խնդիրները» 2-րդ ուսումնամեթոդական գիտաժողովի

(2009, թ. 3) և «Հետդիպլոմային և շարունակական մասնագիտական կրթության արդի խնդիրները» 3-րդ ուսումնամեթոդական գիտաժողովի (2010, թ.7) թեզիսները:

Նշենք, որ այդ ժամանակահատվածում նույնպես տպագրվել են գիտական կոնֆերանսների նյութեր: Դրանք են «Սեքսուալ առողջություն» միջազգային գիտաժողովը (2009, թ.1), «Ստոմատոլոգիական կրթություն և գիտություն ասոցիացիայի» I միջազգային վեհաժողովը (2009, թ. 2), «Ժամանակակից օտոռինոլարինգոլոգիայի արդիական խնդիրները» գիտաժողովը (2009, թ. 4), Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի 90-ամյակին նվիրված ուսանողական գիտաժողովը (2011, թ. 8), Երկրորդ միջազգային վեհաժողովը՝ նվիրված ստոմատոլոգիական ֆակուլտետի 50 ամյակին (2012, թ. 11, թ. 12):

2009-2013թթ. հոդվածները հիմնականում արտացոլել են Բոլոնիայի գործընթացներով պայմանավորված ուսումնական հարցերը [41, 42], մասնավորապես շարունակական կրթության նկատմամբ առաջադրվող պահանջները [8, 12, 18, 19, 24], հետդիպլոմային և շարունակական մասնագիտական կրթության խնդիրները [23], ուսումնառության ընթացքում կրեդիտների կուտակման և փոխանցման անհրաժեշտությունն ընդհանրապես [21, 32, 40, 42] և մասնավորապես, ուսումնառության 3-րդ աստիճանում՝ ասպիրանտուրայում [15], օտար լեզուների դասավանդման կարևորումը [45, 50], արտասահմանցի ուսանողների հետ աշխատանքին առնչվող մեթո-

դական խնդիրները [53, 54], տեսական բժշկության դասավանդման մեթոդական և դիզայնին առնչվող խնդիրները [25, 34], օտարազգի ուսանողների կազմի վերլուծությունը [36], ուսանողների գիտելիքների ստուգման գնահատման մոտեցումները [22, 33], ինչպես նաև դասախոսների մասնագիտական որակավորման կազմակերպման խնդիրները [20], ԵՊԲՀ-ում ուսումնական գործընթացում կատարված բարեփոխումների ընդհանուր վերլուծությունը [14] և այլ մեթոդական խնդիրներ [13]: Անդրադառնալով առանձին հոդվածներ ներկայացրած ստորաբաժանումներին՝ պետք է նշել, որ միայն 5 ամբիոն է մասնակցել այդ գործընթացին (10 հոդված), իսկ մյուս 15 հոդվածները ներկայացվել են համալսարանի վարչական ստորաբաժանումների կողմից: Ամբիոններից առավել ակտիվ են եղել ընտանեկան բժշկության և օտար լեզուների ամբիոնները:

2014-2024թթ. և 2009-2013թթ. ժամանակահատվածներում «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում տպագրված հոդվածների համեմատական բնութագիրը

Հասկանալի է, որ բոլոր հոդվածներն իրականում արտահայտում են տվյալ ժամանակաշրջանի պահանջները: Եվ այդ առումով դժվար կլինի վերջին 10 տարում տպագրված հոդվածները համեմատել մինչ այդ 5 տարիների ընթացքում տպագրված հոդվածներում քննարկվող նյութերի հետ, սակայն եթե ոչ որակական, ապա քանակական առումով, այնուամենայնիվ, այդ համեմատությունն ուշագրավ է:

Ընդհանուր առմամբ, ինչպես երևում է աղյուսակ 1-ի և 2-ի համեմատությունից, 2014-2024թթ. տպագրված ուսումնամեթոդական բնույթի հոդվածների միջին տարեկան քանակը զիջում է 2009-2013 թթ-երի նույն ցուցանիշին. վերջինս կազմում է 5 հոդված, մինչդեռ վերջին տասնամյակում, ինչպես նշեցինք, այդ ցուցանիշը ընդամենը 2-3 է: Առաջին հայացքից թվում է, որ ուսումնամեթոդական աշխատանքի ներկայացումը որոշակի անկում է ապրել, սա-

կայն վերջին 10 տարվա ընթացքում ուսումնամեթոդական բնույթի հոդվածներ ներկայացրած ամբիոնների քանակն ավելացել է, սակայն ակտիվ ամբիոնները մնում են նույնը: Սրա հետ մեկտեղ պետք է նշել, որ տպագրված համարների քանակը համեմատական չէ ներկայացված 5 և 10 տարիների ժամանակահատվածին: Այսպես՝ առաջին 5 տարիների ընթացքում տպագրվել է 14 համար, իսկ 10-11 տարվա ընթացքում՝ միայն 23: Բոլոր դեպքերում կարելի է եզրակացնել, որ նշված երկրորդ ժամանակահատվածում ավելի շատ հոդվածներ կարող էին տեղ գտնել պարբերականում: Այսպիսով, հոդվածների քանակական դրական տեղաշարժ չի նկատվում: Այս երևույթը հավանաբար պայմանավորված է նրանով, որ վերջին տարիներին ամբիոնների աշխատակիցները ուսումնական ծանրաբեռնվածության հետ մեկտեղ ավելի մեծ ուշադրություն են դարձնում գիտահետազոտական աշխատանքներին և փորձում են իրենց հոդվածները տպագրել ազդեցության գործոն ունեցող պարբերականներում: Նման վարվելակարգը պահանջված է թեզի պաշտպանության կամ գիտական կոչում ստանալու համար: Ինչպիսին էլ լինի այդ ցուցանիշը, նշված տվյալներից բխում է, որ թե՛ 2009-2013թթ. և թե՛ 2014-2024թթ. հիմնականում նույն սակավ ստորաբաժանումներն են ներկայացրել իրենց ուսումնամեթոդական փորձը:

Եզրակացություններ

1. «Բժշկություն, գիտություն և կրթություն» պարբերականի «Կրթություն» ենթաբաժնում տպագրված հոդվածների բնույթը համահունչ է համալսարանում իրականացվող վերափոխումներին:
2. Դինամիկայում ուսումնամեթոդական բնույթի աշխատանքների քանակը պակասում է, և այդ փաստը հուշում է, որ ավելի լուրջ մոտեցումներ պետք է մշակել ուսումնամեթոդական ոլորտի գործընթացների վերաբերյալ:
3. Ակնկալվում է բոլոր ստորաբաժանումների ավելի մեծ ակտիվությունն ուսումնամեթոդական փորձի մշակման և դրա փոխանակման առումով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Յ.Տ., «Kahoot» առցանց հարթակի կիրառումը որպես ձևավորող գնահատման գործիք ֆիզիոլոգիայի դասավանդման ընթացքում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2023, 36, 86-91:
2. Ավետիսյան Ս.Ա., Վարդերեսյան Ս.Գ., Գրիգորյան Ա.Ս., Սկրտումյան Ռ.Ռ., Խնդրի վրա հիմնված ուսուցումը (problem-based learning) ախտաֆիզիոլոգիայի գործնական պարապմունքների ժամանակ, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2018, 24, 92-97:
3. Բայկով Ա.Վ., Պետրոսյան Լ.Ջ., Բարձրագույն բժշկական կրթության

մեջ ուսուցման «շրջված դասարան» մոդելի ներդրման հեռանկարները, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2024, 37, 106-114:

4. Գևորգյան Ջ.Ն., Ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոնի պատմությունից, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2015, 19, 138-145:
5. Գրաբսկի Մ.Ա., Կճանյան Մ.Գ., Կլինիկական մտածողության ձևավորման և զարգացման մեթոդաբանական հիմնահարցերը, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2019, 27, 106-111:

6. Գրաբսկի Մ. Ա., Կճանյան Մ. Գ., Հիվանդության ախտորոշումը որպես բժշկական ճանաչողության կարևորագույն ոլորտ (մեթոդաբանական և տրամաբանական հայեցակետերը), Բժշկություն, գիտություն և կրթություն, 2021, 31, 93-98:
7. Գրաբսկի Մ. Ա., Կճանյան Մ. Գ., Գրաբսկի Ա. Մ., Դետեմինիզի սկզբունքը կլինիկական բժշկության մեջ, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2022, 33, 42-46:
8. Դանիելյան Ա. Ա., Կարապետյան Յ. Բ., Նարինյան Մ. Չ., Յաղջյան Գ. Վ., Երևանի Մ. Զեբազու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ծրագրերում ուսումնական մոդուլների ներդրման հայեցակարգ և ուղեցույց, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2011, 9, 117-120:
9. Թաղևոսյան Ա. Է., Հայրապետյան Գ. Հ., Սակալյան Ա. Կ., Ազնուրյան Ս. Ա., Սուքիասյան Ռ. Ռ., Մարկոսյան Ա. Մ., Վարուժանյան Յ. Ա., Հարությունյան Չ. Մ., Դասավանդման նոր մեթոդներ և մոտեցումներ հանրային առողջապահության մասնագիտությամբ մագիստրոսների պատրաստման շրջանակներում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2015, 18, 134-137:
10. Թաղևոսյան Ա. Է., Սակալյան Գ. Հ., Ազնուրյան Ս. Ա., Սուքիասյան Ռ. Ռ., Մարկոսյան Ա. Մ., Վարուժանյան Յ. Ա., Հարությունյան Չ. Մ., Հայրապետյան Ա. Կ., Հանրային առողջության և առողջապահության ամբիոնում ուսումնական գործընթացի բարելավման ուղիները բակալավիների ուսուցանելու շրջանակներում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2015, 19, 101-105:
11. Խոտզավերյան Դ. Ն., Համբարձումյան Գ. Ռ., Ֆիզիոլոգիայի դասավանդման մեթոդաբանությունը, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2014, 17, 113-120:
12. Կարապետյան Յ. Բ., Հարատև կրթությունը և այդ ոլորտի հետագա զարգացման ուղղությունները Երևանի Մ. Զեբազու անվան պետական բժշկական համալսարանում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2011, 9, 112-116:
13. Մարգարյան Ա. Գ., Բաղայան Մ. Ա., Ադամյան Ա. Է., Վարդանյան Զ. Կ., Խոլշոյան Թ. Թ., Գասպարյան Դ. Թ., «Առաջին բուժօգնություն» առարկայի դասավանդման որակի գնահատումը, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 2, 11-14:
14. Մարկոսյան Ա. Մ., Ավետիսյան Լ. Ռ., Երևանի պետական բժշկական համալսարանում 2006-2011 թթ. իրականացրած բարեփոխումների նկատմամբ ներքին և արտաքին շահակիցների վերաբերմունքը, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2013, 14, 140-151:
15. Մելքոնյան Մ. Մ., Տեր-Մարկոսյան Ա. Մ., Ղազարյան Կ. Հ., ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ աստիճանում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների համաձայն ԵՊԲԳ-ում կրեդիտային համակարգի ներդրման մասին, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2010, 5, 65-68:
16. Մելքոնյան Կ. Վ., ԵՊԲԳ ֆիզիոլոգիայի ակումբը՝ գիտելիքի ճանապարհ, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2020, 29, 82-85:
17. Մուրադյան Ա. Ա., Ավետիսյան Լ. Ռ., Բայկով Վ. Վ., Ավետիսյան Գ. Ա., Բարոյան Կ. Մ., Կրթական ծրագրերի համապատասխանեցման գործընթացը Երևանի Մ. Զեբազու անվան պետական բժշկական համալսարանում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2020, 30, 23-29:
18. Յաղջյան Գ. Վ., Կարապետյան Յ. Բ., Բայան Ա. Յու., «Ընդհանուր բժշկական գործունեություն» մասնագիտությամբ ինտերնատուրայի կազմակերպման դրվածքը ԵՊԲԳ-ում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2010, 5, 69-71:
19. Յաղջյան Գ. Վ., Կարապետյան Յ. Բ., Տեսակետներ և առաջարկներ Հայաստանի Հանրապետությունում շարունակական բժշկական կրթության համակարգի հետագա զարգացման ուղղությամբ, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2010, 7, 80-84:
20. Յաղջյան Գ. Վ., Կարապետյան Յ. Բ., Երևանի Մ. Զեբազու անվան պետական բժշկական համալսարանի դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացումը կատարելագործման դասընթացների միջոցով, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2010, 7, 85-88:
21. Յաղջյան Գ. Վ., Սիմոնյան Յ. Հ., Շարունակական բժշկական կրթության արդիական հարցեր: Կրեդիտավորման կուտակային համակարգի բարեփոխումները ՀՀ-ում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 2, 6-10:
22. Յաղջյան Գ. Վ., Կարապետյան Յ. Բ., Գևորգյան Ն. Գ., Երևանի Մ. Զեբազու անվան պետական բժշկական համալսարանի ինտերնատուրայի ընթացքում անցկացվող համակարգային թեստավորման արդյունքների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2011, 8, 123 - 126:
23. Յաղջյան Գ. Վ., Կարապետյան Յ. Բ., Կրեդիտային միավորների կուտակային համակարգը և նրա ներդրումը Երևանի Մ. Զեբազու անվան պետական բժշկական համալսարանի հետբուժական մասնագիտական կրթության ասպարեզում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2011, 10, 104-106:
24. Նավասարդյան Գ. Ա., Ճանապարհը քայլով: Ե հարթահարում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 1, 15-21:
25. Նավասարդյան Գ. Ա., Տեսական բժշկության դասավանդման մեթոդաբանության և դիզայնի նորարարացման շուրջ, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 4, 40-43:
26. Նավասարդյան Գ. Ա., Ախտաֆիզիոլոգիական վերլուծությունը որպես արձանագրային և անհատականացված բժշկությունների կապակցման, մասնագիտական մտածելակերպի ձևավորման գործիք, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2014, 16, 164-167:
27. Նավասարդյան Գ. Ա., Ավետիսյան Ս. Ա., ՈՒԹԻՎ/SWOT-ը՝ որպես ամբիոնի գործունեության տարեկան հաշվետվության վերլուծական արդյունավետ գործիք (այլընտրանքային մոտեցում ամբիոնական տարեկան հաշվետվությանը), Բժշկություն, գիտություն և կրթություն, 2015, 19, 98-100:
28. Նավասարդյան Գ. Ա., Եվրոպական չափանիշային (գեներատորների) կիրառումը բժշկական տեսական առարկաների դասավանդման գործընթացում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2017, 23, 131-133:
29. Նավասարդյան Գ. Ա., Գևորգյան Ա. Գ., ԵՊԲԳ տեսական ամբիոններում սովորողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և բարելավման շուրջ, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2018, 26, 96-99:
30. Նավասարդյան Գ. Ա., Ղազարյան Դ. Մ., ԵՊԲԳ տեսական ամբիոններում սովորողների գիտելիքների գնահատման մեթոդաբանության կարգաբերման շուրջ, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2019, 27, 103-105:
31. Նավասարդյան Գ. Ա., Պողոսյան Մ. Ա., Տեսական առարկաների դասավանդման գործընթացում Բլոմի տաքսոնոմիայի և հիմնախնդրախնդ (problem-based) կրթական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2021, 32, 72-75:
32. Սահակյան Լ. Ա., Շարունակական բժշկական կրթության արդիական հարցեր: Կրեդիտավորման կուտակային գնահատումը որպես դիդակտիկայի հիմնարար և դժվար լուծվող հիմնախնդիր, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 2, 59-71:
33. Սահակյան Լ. Ա., Գնահատումը որպես դիդակտիկայի հիմնարար և դժվար լուծվող հիմնախնդիր, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 3, 59-71:
34. Սահակյան Լ. Ա., Կրթական տեխնոլոգիան որպես նոր ուղղություն ուսուցման գործընթացում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2011, 8, 115-122:
35. Սահակյան Լ. Ա., Սահակյան Ա. Լ., Կրթական համակարգի բարեփոխումները, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2021, 31, 88-92:
36. Սարգսյան Ա. Վ., Մարգարյան Ա. Գ., Երևանի պետական բժշկական համալսարանում անգլերենով ուսուցանվող օտարերկրյա ուսանողների համակարգը, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 1, 22-25:
37. Սարգսյան Գ. Ռ., Մեր մոտեցումները սեռակրթության ձևաչափի և ուղղորդիչների վերաբերյալ, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2014, 16, 168-171:
38. Սարգսյան Գ. Ռ., Հայրապետյան Ա. Կ., Սեռական դաստիարակության կրթական ծրագրի արդյունավետության գնահատականը, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2014, 16, 172-175:
39. Սուքիասյան Յ. Վ., Թոռնյան Ն. Ա., Բժշկագիտական լեզվի ուսուցման խնդիրները, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2024, 37, 115-119:
40. Վարոյան Ա. Ֆ., Շարունակական բժշկական կրթության կրեդիտավորումը Եվրոպայում: Ներկա վիճակը, առկա խնդիրները և զարգացման հեռանկարները, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 3, 72-78:
41. Զյալյան Գ. Պ., Բոլոնյան գործընթաց. Չարգացման միտումներն ու հիմնախնդիրները, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2009, 1, 9-14:
42. Զյալյան Գ. Պ., Ավետիսյան Լ. Ռ., Մարկոսյան Ա. Մ., Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը և նրա կիրառումը Երևանի Մ. Զեբազու անվան պետական բժշկական համալսարանում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2010, 5, 60-64:
43. Օրդոնյան Ս. Լ., Հակոբյան Է. Կ., Ուսումնական նյութի դասավանդման առանձնահատկությունները «Օպերատիվ վիրաբուժություն և տեղագրական անատոմիա» առարկայի շրջանակներում, Բժշկություն, գիտություն և կրթություն, 2023, 35, 63-70:
44. Арзуманян Л.С. Использование интерактивных методов в обучении английской медицинской лексике // Медицина, наука и образование, 2019, 27, 112-

117

45. Балабян В.М., Налбандян С.Р., Назаретян Н.Р., Бишарян М.Н Актуальные проблемы преподавания иностранных языков в медицинском ВУЗе // Медицина, наука и образование, 2010, 5, 72-78
46. Даниелян И.Э Обучение, основанное на проблеме // Медицина, наука и образование, 2014, 16, 160-163.
47. Даниелян И.Э. Образовательные программы в медицине образа жизни: в фокусе – вопросы питания // Медицина, наука и образование, 2024, 38, 106- 109
48. Маркрян А.Г., Мардян М.А., Нариманян М.Э Эмпатия как важная личностная характеристика врачебной специальности // Медицина, наука и образование, 2011, 8, 110-114
49. Налбандян С.Р., Балабян В.М., Асатрян Т.К. Вопросы интегрированного обучения русскому и латинскому языкам в медицинском ВУЗе // Медицина, наука и образование, 2019, 28, 82-86
50. Налбандян С.Р., Меликян Н.А., Шахназарян А.М Методические основы создания нового учебного пособия по русскому языку для студентов-медиков “Мы читаем, пишем и говорим по-русски” // Медицина, наука и образование, 2010, 5, 79-83
51. Шахрамьян В.А., Акопян А.Э., Закарян М.А., Григорян А.Д., Азатян Р.Э. Сексология как обязательная учебная дисциплина в системе высшего медицинского образования // Медицина, наука и образование, 2024, 38, 110-113
52. Baykov A.V., Shaghatyan T.L. Bedside teaching in undergraduate medical education// Medicine, science and education, 2022, 33, 35- 41
53. Margaryan A.G., Adamyany A.E Evaluation of the quality of “first aid” teaching to foreign students instructed in English // Medicine, science and education, 2010, 5, 84-86
54. Petrosyan A.H Biomedical word sense disambiguation with knowledge based algorithm: an overview // Medicine, science and education, 2011, 8, 127-131

РЕЗЮМЕ

НАУЧНО-ИНФОРМАЦИОННЫЙ ЖУРНАЛ «МЕДИЦИНА, НАУКА И ОБРАЗОВАНИЕ» В ОСВЕЩЕНИИ ВНЕДРЕНИЯ ИННОВАЦИОННЫХ ПРОГРАММ В ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ПРОЦЕСС

Тер-Маркосян А.С.

Редакция научно-информационного журнала «Медицина, наука и образование»

Ключевые слова: образование, инновационные программы, информация, улучшение образовательного процесса, интерактивное обучение, самостоятельная работа студента, студенческие научные кружки.

На протяжении примерно 15 лет, научно-информационный журнал «Медицина, наука и образование», помимо публикации научно-исследовательских статей теоретической и клинической направленности, занимается освещением инновационных подходов, внедренных в образовательный процесс на различных кафедрах, что, как понятно, в современном перенасыщенном ритме жизни способствует овладению информацией и создает основу для обмена опытом и сотрудничества.

Цель данной статьи - анализ статей, опубликованных в журнале «Медицина, наука и образование» за последнее десятилетие, относящихся к образованию и образователь-

ной сфере. При этом было интересно сравнить количество и характер статей, представленных различными подразделениями, за последние 10 лет, с опубликованными статьями за пятилетний период, начиная с 2009г. - со дня основания журнала. В результате сравнительного анализа мы пришли к следующим выводам:

1. Характер статей, напечатанных в разделе «Образование» журнала «Медицина, наука и образование», соответствует преобразованиям, происходящим в университете.
2. В динамике уменьшается количество учебно-методических статей, и этот факт требует более серьезного подхода к процессам в образовательной сфере.
3. Ожидается большая активность от всех подразделений в разработке учебно-методической работы и обмене этим опытом.

SUMMARY

THE SCIENTIFIC AND INFORMATIONAL JOURNAL “MEDICINE, SCIENCE AND EDUCATION” IN COVERING THE IMPLEMENTATION OF INNOVATIVE PROGRAMS IN THE EDUCATIONAL PROCESS

Ter-Markosyan A.S.

Editorial Board of the Scientific and Informational Journal “Medicine, Science, and Education”

Keywords: education, innovative programs, information, improvement of educational process, interactive teaching, student self-study, student scientific groups.

For around 15 years, the scientific and informational journal “Medicine, Science, and Education”, in addition to publishing scientific-research articles with theoretical and clinical orientations, has also covered approaches to the educational process across various departments, contributing to information dissemination, the exchange and acquisition of experience, and the promotion of cooperation.

The purpose of this article is to analyze the nature and practical significance of articles related to the education, published in the “Medicine, Science, and Education” journal over the past decade. Furthermore, it is interesting to compare the number and nature of these articles with those published during the

five-year period, starting from 2009, the year the journal was founded.

As a result of the comparative analysis, we have reached the following conclusions:

1. The nature of the articles published in the “Education” section of the Scientific and Informational Journal “Medicine, Science and Education” is in line with the reforms carried out in the University.
2. In the dynamic, the number of educational and methodological articles decreases, and this fact requires a more serious approach to the educational process.
3. All departments are expected to be more actively involved in the development and its exchange of the educational experience.